

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Ընդունելության թեստը բաղկացած է 3 մասից:

I մասը գնահատվում է 10 միավոր, ընդգրկված է հայերենի ուղղագրությանը, հնչյունափոխությանը և կետադրությանը վերաբերող 5 առաջադրանք, յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր:

II մասը գնահատվում է 30 միավոր: Տրված բնագրի հիման վրա անհրաժեշտ է կատարել 15 առաջադրանք, յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր:

III մասում առաջարկվում է գրել շարադրություն՝ 3 թեմայից ընտրելով միայն մեկը: Առաջադրանքը գնահատվում է 10 միավոր: Շարադրել գրագետ, թույլ չտալ ուղղագրական, կետադրական, ոճական և շարադասական սխալներ:

Շարադրությունը գնահատվում է երկու բաղադրիչով.

ա) բովանդակություն՝ 5 միավոր (տրամաբանություն, ինքնուրույն մտածողություն, ստեղծագործական մոտեցում),

բ) շարադրանքի որակ՝ 5 միավոր (ուղղագրություն, կետադրություն, բառագործածություն, քերականություն):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 120 րոպե:

ՄԱՍ I

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. *Լրացնել բաց թողած տառերը և երկհնչյունները.*

Հն__աբան, հն__րյա, առ__նթեր, լոել__յն, դար__ին, անօ__, կեցվա__ք, թռ__ել, ա__տածին, ա__բաստանել:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. *Մյունակներից առանձնացնել և կողք կողքի գրել հումանիշ բառերը.*

- | | | |
|---------------|---------------|------------------|
| 1. Ապիկար | 1. կողմնակալ | 1. մղել |
| 2. կազդուրել | 2. անվանարկել | 2. անարդար |
| 3. աչառու | 3. ապաշնորհ | 3. հեղինակագրկել |
| 4. վարկաբեկել | 4. ապաքինել | 4. առողջացնել |
| 5. հրահրել | 5. դրդել | 5. անճարակ |

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. *Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով.*

Հինգ (վեց), մեջք (մեջքի), հյուսիս (արևելք), առ (ձեռն), ի (գիտություն), ահել (ջահել), ճյուղից (ճյուղ), տարեց (տարի), հողս (ցնդել), ուշ (ուշ).

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. *Ընդգծել այն բաղադրյալ հատուկ անունները, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով.*

Հովհաննես Դրասխանակերտցի, Մխիթարյան Միաբանություն, Միջին Ասիա, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության Նախարարություն, Ներսես Մեծ, Նոր Արեշ, Գարեգին Նժդեհի Հրապարակ, Սահակ Ա Պարթև, Սաուդյան Արաբիայի Թագավորություն, Լեոնային Ղարաբաղ, Սարոյանի <<Մարդկային Կատակերգություն>> Վիպակը, Հովհան Ոսկեբերան, Լեոնարդո Դա Վինչի, Նար-Դոս, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. *Կետադրել.*

Ամեն օր երբ լույսը բացվում էր կարոտակեզ նայում էր հեռուն և հայացքը չէր կտրվում երկնակարկառ լեռների տեգերի նման ցցված սուր կատարներից:

Իր բնօրրանը քարքարոտ լեռներով հուռթի դաշտերով չէր ջնջվում նրա հիշողությունից: Այնտեղ Բյուրակնյա լեռներում ջրերը ցողում էին կանաչ ու խոտ կայծկլտալով կապտաթուր երկնքի լույսի տակ:

ՄԱՍ II

Կարդալ բնագիրը և կատարել 6-20 առաջադրանքները.

(1) Գարնանային լագուր երկնքի մեջ շողշողում են Գեղամա լեռները: (2) Զմրուխտյա մաքուր լեռների գոգում երկնքի կապուտաչյա քույրը՝ Գեղամա ծովակը, արեգակի ոսկով վառված, մարգարտյա փրփուրներով պճնված, շնչում է, հևում: (3) Զվարթ ու քչքչուն առունները, շողշողուն լեռներից, քարափներից գլոր-գլոր, ձորերի մեջ ոլոր-մոլոր թռչկոտելով, ոստոստալով, թավալվում են ծաղկապարուր դաշտերի մեջ, վազեվազ փախչում են, թռչում: (4) Ղողանջուն անտառներից ձգված լաջվարդ ամպերի քարավանը, քսվելով ադամանդակուտ լեռների խրոխտ ճակատներին, գնում է հեռու:

(5) Այս հրաշք երկրում է ապրում երգի սիրահար պատանին:

(6) Նա չէր երգում, նա չէր նվագում....

(7) Բայց նա անհունորեն սիրում էր լսել շնչյունը սրտերի, խորունկ երգերը մայր բնության, աստղազարդ երկնքի:

(8) Հայացքը սուգած երկնքի կապույտում՝ լսում էր պատանին թախծոտ երգերը քնքուշ ու անուշ ծաղիկների, երգերն անքուն աստղերի: (9) Հոգեզմայլ ականջ էր դնում սազի սրտառուչ հեծեծանքներին, մով ծովի տխրաթախիծ երգերին:

(10) Մեղմօրոր ալիքները հեռուններից գալիս, մոտենում էին ու մարում նրա ականջի տակ, կրծքի վրա: (11) Զօր ու գիշեր նրա ականջին հնչում էր հալածական քամու մելամաղձիկ երգը:

(12) Առավոտից մինչև աստղազարդ գիշեր այսպես թափառում էր տխրադեմ պատանին՝ լսելու բնության երգերը հազարալեզու: (13) Նա նայում էր լուռ նիրհած լեռներին, համր, արևակեզ ժայռերին, ոտքերի տակ ծեծվող ճանապարհներին ու մրմնջում էր ինքն իրեն. <<Ա՛խ, սրանք բոլորը երգ չեն լսում>>:

(14) Ու նորից ականջին հնչում էր երգը՝ չնաշխարհիկ, դողանջուն, գեղեցիկ ու վսեմաշուք:

(15) Նա գնաց հեռավոր աշխարհներ, ուր երգող սիրտ կար, ուր բնությունն էր դողանջում խորախորհուրդ լռության մեջ:

Ըստ Ավ.Բասիակյանի

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 6. 12-րդ և 13-րդ նախադասություններից դուրս գրել 4 բարդ ածական.

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 7. 7-րդ նախադասությունից դուրս գրել 4 ածանցավոր բառ.

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 8. Բնագրից դուրս գրել էրկնագույն ածականի 4 հոմանիշ.

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 9. 13-րդ նախադասությունից դուրս գրել 4 դերանուն.

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 10. 4-րդ նախադասությունից դուրս գրել 2 /անկախ/ դերբայ և որոշել տեսակը.

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 11.5-րդ և 11-րդ նախադասություններից դուրս գրել ՈՒ հոլովման պատկանող 2 գոյական.

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 12. 2-րդ նախադասությունից դուրս գրել սեռական հոլովով գործածված 2 գոյական.

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 13. Որոշել 10-րդ նախադասության ղիմավոր բայերի էղանակը և ժամանակաձևը.

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 14. 2-րդ նախադասությունից դուրս գրել բացահայտիչը և բացահայտյալը և որոշել բացահայտչի տեսակը.

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 15. 7-րդ նախադասությունից դուրս գրել ուղիղ խնդրի 2 օրինակ.

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 16. 7-րդ նախադասությունից դուրս գրել ձևի պարագայի 1 օրինակ.

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 17. 8-րդ նախադասությունից դուրս գրել նախադաս դերբայական դարձվածք.

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 18. 2-րդ, 4-րդ և 6-րդ նախադասություններից ո՞րն է պարզ, գրել նախադասությունը.

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 19. Կազմել 3-րդ նախադասության գծապատկերը (համարակալումը կատարել բնագրի նախադասության վրա).

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 20. 14-րդ նախադասությունից դուրս գրել հետադաս ծավալուն որոշիչը.

ՄԱՍ III

Կատարել տրված 3 առաջադրանքից միայն մեկը.

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 21.1 Շարունակել բնագիրը (Մաս II)՝ ստեղծագործելով ինքնուրույն:

Նվազագույն ծավալը՝ 100 բառ

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 21.2 Գրել շարադրություն «...Երգն իմ տարերքն է» խորագրով՝ բնագրից (Մաս II)՝ օգտագործելով 15 բառ և բառակապակցություն /շարադրության մեջ ընդգծել դրանք/:

Նվազագույն ծավալը՝ 100 բառ

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 21.3 Գրել ազատ շարադրություն՝ «Իմ երազանքի մոլորակը» վերնագրով:

Նվազագույն ծավալը՝ 100 բառ

